Ուրբաթ, 2 հուլիսի 2010 թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Ս. Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 8 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի բնակելի տանիքների վերանորոգման և Ստեփանակերտ քաղաքի N 11 միջնակարգ դպրոցի կահավորման ծրագրերը:

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնահովիտ համայնքի խաղահրապարակի և Յաղդան համայնքի զբոսայգու տարածքների բարեկարգման, ինչպես նաև նույն մարզի 30 համայնքների բնակչության արտակարգ իրավիճակներում խոցելիության նվազեցում և Սյունիքի մարզի Գեղանուշ համայնքի մանկական խաղահրապարակի կահավորում խաղասարքերով ու Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Գանձակ համայնքի մանկապարտեզի վերանորոգման ծրագրերը:

ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կաղմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձատափ գյուղի դպրոցի վերանորոգում» ծրագիրը:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Երեմյան խցերի վերանորոգման նախագծում» ծրագիրը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: